



ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՓՈՐՈՇՉԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ




ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է
«Պարադիգա» կրթական
հիմնադրամի կողմից
2020 | ՀՈՒՆԻՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 25-ին e-draft.am կայքում ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հունիսի 27-ին՝ «Պարադիգմա» կրթական հիմնադրամի նախաձեռնած Edcamp Հայաստան 2020 կրթական-ուսուցչական համաժողովի շրջանակում ՀՀ ԿԳՄՍՆ-ի հետ համատեղ իրականացվել է որոշման նախագծի քննարկում: Քննարկմանը զուգահեռ հարթակում մասնակցել է **2288** մասնակից, ՖԲ հարթակում ուղիղ հեռարձակումն արձանագրել է **96.000** դիտում: Քննարկումը կազմակերպվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի և Ֆրիդրիխ Նաումանի՝ «Հանուն Ազատության» հիմնադրամի Հարավային Կովկասի գրասենյակի հետ համագործակցությամբ:

Զեկույցն արտացոլում է շուրջ **2000** հարց, առաջարկ կամ մեկնաբանություն՝ հավաքագրված երեք աղբյուրից (տես ստորև):



Զեկույցը ներկայացնում է հարցերը և առաջարկները՝ ըստ հետևյալ բաժինների.

- Հափորոշչի պարզաբանումներ,
- Հափորոշչիչների և դասագրքերի ստեղծման գործընթացին մասնակցություն,
- Ուսումնական առարկաներ և դասագրքեր,
- Ուսումնական նախագծեր,
- Գնահատում,
- Դրույքաչափեր և ընդհանուր ֆինանսավորում,
- Ավագ դպրոց և բուհ ընդունելություն,
- Այլ:

ՀԱՓՈՐՈՇԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հարցեր

- «Հանրակրթական տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները» բաժնում ուշագրավ է՝ «գբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ» կետը. ի՞նչ է նախատեսվում այս կարևոր գործում երեխաներին մոտիվացնելու և առաջ մղելու համար:
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն ձևավորելու նպատակով նախատեսվում է արդյոք ներմուծել նոր գրականություն, որ կյանքի հմտություններ կսովորեցնի:
- Ի՞նչ է նշանակում չափորոշչի բաղադրիչներից «դիրքորոշում» բաղադրիչը:
- Ինչպե՞ս են ուսուցիչները աշխատելու կարողունակության եզրույթի իրականացման ուղղությամբ, եթե անգամ իմաստի տարբեր ընկալումներ կան կամ առհասարակ չկան:
- Ինչպե՞ս և որտե՞ղ են ներդրվելու Լանգարոտեի կոնվենցիայից բխող սեռական կրթությանը վերաբերող հարցերը և տարիքային ո՞ր շեմի սկզբունքներից ելնելով:



ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հարցեր

- Ի՞նչ ձևաչափով կարելի է նախարարությանը հասանելի դարձնել մեր փորձը՝ ինտեգրված ուսուցման, կոմպետենցիաների զարգացման և հետազոտական աշխատանքների պահանջների ուսուցման մեթոդաբանության և այլնի վերաբերյալ:
- Նախատեսվո՞ւմ է արդյոք առարկայական ծրագրերի բաց քննարկումներ ծրագիրը մշակող առարկայախմբերում չընդգրկված ուսուցիչների հետ:
- Ինչպե՞ս է իրականացվելու կրթության բարեփոխմամբ հետաքրքրված բոլոր ուսուցիչների լիարժեք ներգրավվածությունը ծրագրերի մշակման և մյուս գործընթացներում, և ինչպե՞ս է ապահովվելու հետադարձ կապը:
- Փոփոխությունների գործընթացում ուսուցիչներ ներգրավվա՞ծ են եղել:
- Արդյո՞ք նոր չափորոշիչները մշակող հանձնախմբում ընդգրկված մասնագետներն ունեն չափորոշիչներ մշակելու փորձ:
- Դասագրքերի փոփոխության համար նախատեսվո՞ւմ են առարկայական առանձին քննարկումներ:
- Արդյո՞ք կարող է ուսուցիչը կազմել չափորոշիչներին համապատասխան դասագիրք և նախարարության հաստատումից հետո իր դպրոցում կիրառել այդ դասագիրքը:

Առաջարկներ

- Ուսուցիչների փորձի փոխանակման առումով ընդգրկել բոլոր դպրոցներին, որպեսզի հնարավոր լինի ներկայացնել ուսուցիչների ամբողջ ձեռք բերածը:
- Կրթական խնդիրների մասին լսել աշակերտներին, որովհետև առաջին հերթին աշակերտներն են տեսնում դրանք:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Օտար լեզու. հարցեր

- Ռուսաց լեզվի ծրագրում ի՞նչ փոփոխություններ են ակնկալվում:
- Ի՞նչ փոփոխություններ են լինելու դպրոցում երրորդ օտար լեզվի ուսուցման մեջ: Պահպանվելու է արդյոք դրա ուսուցումը, թե՞ լինելու է կամընտրային: Լեզուն ընտրում է դպրոցը, թե՞ սովորողը:
- Արդյո՞ք ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում կներառվի իսպաներեն լեզու առարկան կամ այդ առարկայի ուսուցիչների համար հնարավորություն կստեղծվի՞ ընդգրկվել օտար լեզուների վերապատրաստման ընդհանուր ծրագրերում:

Օտար լեզու. առաջարկներ

- Երրորդ և չորրորդ դասարաններում անգլերենի դասաժամերն ավելացնել:
- Հաշվի առնել հայոց լեզվի և օտար լեզուների համապատասխանությունը թեմաների հերթականության հարցում: Օրինակ՝ հայոց լեզվում բայի սեռը, խոնարհումը ուսումնասիրվում են 7-րդ դասարանում, իսկ օտար լեզվի առարկաներում բայի հետ առնչվող թեմաները սկսում են ուսումնասիրել 3-րդ դասարանից (երբ դեռ բայի ժամանակաձև մայրենիից չեն անցել):
- 2-րդ և 3-րդ դասարաններում ավելացնել ռուսաց լեզվի դասաժամերը (դարձնել երեք ժամ):
- 7-9-րդ դասարաններում մեկ ժամով ավելացնել ռուսաց լեզվի դասաժամերը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Բնագիտություն, ՏՀՏ, ճարտարագիտություն, մաթեմատիկա. հարցեր

- Ո՞վ պիտի դասավանդի 5-6-րդ դասարանների բնագիտության առարկան, եթե դրա համար պահանջվում է այնպիսի մասնագետ, ով տիրապետում է դասընթացի աշխարհագրական, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կողմերին:
- Տարրական դասարաններում ՏՀՏ կրթությունը ներկայացվելու է առանձին, թե՞ ինտեգրված ուսումնական առարկայով: Դասվարը իրավունք կունենա՞ դասավանդել այդ առարկան:
- Արդյո՞ք դպրոցներն ապահովվելու են համակարգչային ծրագրերով և ինչպե՞ս:
- Ինչպիսի՞ փոփոխություններ են նախատեսվում ՏՀՏ առարկայի ծրագրում և ավագ դպրոցի դասագրքերում:
- Լինելո՞ւ է արդյոք բնագիտական լաբորատորիաների վերազինում և ի՞նչ ժամանակացույցով:
- Արդյո՞ք ավելանալու են ֆիզիկա առարկայի դասաժամերը:

Բնագիտություն, ՏՀՏ, ճարտարագիտություն, մաթեմատիկա. առաջարկներ

- Դպրոցից հանել բնագիտություն առարկան՝ որպես անհաջող ստացված հիբրիդ առարկա: Բնագիտության դասաժամերը 5-6-րդ դասարաններում տալ կենսաբանությանը և աշխարհագրությանը, ինչի հաշվին բեռնաթափել այդ առարկաների 7-րդ դասարանի ծրագիրը, պակասեցնել դրանց դասաժամերը: Այս փոփոխությունների հաշվին ավելացնել 7-րդ դասարանի քիմիայի դասաժամերը՝ դարձնելով շաբաթական 2 կամ 3 ժամ, քանի որ առարկայի հիմքը դրվում է 7-րդ դասարանում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

- Կենսաբանություն առարկան սկսել 5-րդ դասարանից՝ առանձնացնելով բնագիտությունից, 5-րդ և 6-րդ դասարաններում մեկ ժամով դասավանդել բուսաբանություն առարկան:
- Բուսաբանություն առարկան վերադարձնել 7-րդ դասարան, կենդանաբանություն անցնել 8-րդ դասարանում, իսկ անատոմիա՝ 9-րդում:
- Ինֆորմատիկա առարկայի համար ավելացնել շաբաթական մեկ դասաժամ:
- 9-րդ և 11-րդ դասարաններում քիմիայի 2 ժամը դարձնել 3, քանի որ 9-րդ դասարանում անօրգանական և օրգանական քիմիա ենք անցնում, որը շատ բարդ է յուրացվում, 12-րդ դասարանում քիմիան ավելացնել մեկ ժամով:
- Ծրագրերը վերանայել՝ հաշվի առնելով միջառարկայական կապերը. օրինակներ՝ ա) օրգանական քիմիան անցնում են 11-րդ դասարանում, այն դեպքում, երբ 10-րդ դասարանում կենսաբանության թեմաների մեծ մասը սերտորեն կապված է օրգանական քիմիայի հետ, բ) ֆիզիկայի և մաթեմատիկայի թեմաների մեջ կա անհամապատասխանություն, գ) տեխնոլոգիա առարկայից ուսումնասիրվում է շրջանագծի բաժին, երբ մաթեմատիկայից դեռ շրջանագիծ չեն ուսումնասիրել:
- 10-րդ և 11-րդ դասարանների ֆիզիկայի դասագրքերը բեռնաթափել կամ դասաժամերն ավելացնել, քանի որ ծրագրերը չափազանց սեղմ են:
- Վերանայել մաթեմատիկայի 4-րդ դասարանի դասագրքի թեմաների բաշխումը՝ ապրիլ-մայիս ամիսներին երկու բարդ թեմա կա (ճանապարհ-ժամանակ-արագություն, կոտորակ): Ստիպված ուսումնասիրվում են նախապես, քանի որ մայիսը տոներ են:
- Մաթեմատիկայի 4-րդ դասարանի դասագրքի առավել բարդ խնդիրները զետեղել 5-րդ դասարանի դասագրքում:
- Վերանայել 8-րդ դասարանի հանրահաշվի և 9-րդ դասարանի երկրաչափության դասագրքերը, թեմաները շատ են և ծավալուն:
- Ավելացնել հանրահաշիվ առարկայի դասաժամերը 8-րդ դասարանում:
- 9-րդ դասարանի մաթեմատիկայի ծրագրից հանել «ֆունկցիաների ձևափոխություններ» թեման, այն միացնել 10-րդ դասարանի ծրագրին, 8-րդ դասարանից հանել «Մոդուլ պարունակող հավասարությունների և անհավասարությունների լուծում» թեման և նորից տեղափոխել ավագ դպրոց:
- Մաթեմատիկայի դասաժամին դասարանը կիսել 2 խմբի՝ համաձայն երեխաների կարողության, ունակության:
- Մաթեմատիկայի դասագրքերի հետ ունենալ առանձին խնդրագրքեր:
- Ավելացնել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասաժամերը 2-րդ և 3-րդ դասարաններում, կամ բեռնաթափել ծրագիրը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Հայոց լեզու և գրականություն. առաջարկներ

- 1-ին դասարանից կարևորել մայրենիի իմացությունը՝ շեշտը դնելով հաղորդակցական հմտությունների, գրավոր և բանավոր գրագետ խոսքի, ստեղծագործական մտքի զարգացման վրա:
- 4-րդ դասարանի մայրենիի դասագրքում լեզվական դասերի վերաբերյալ առաջադրանքների քանակը շատացնել՝ անընդհատ կրկնվող հոմանիշ-հականիշների առաջադրանքների փոխարեն:
- 5-6-րդ դասարաններում անցնել հայոց լեզու և գրականություն առանձին:
- 5-րդ դասարանի մայրենիի դասագրքում փոփոխություններ իրականացնել. ուղղագրական նյութը դժվարությամբ են յուրացնում, դասագրքում տեղ գտած հեքիաթները կարելի է փոխարինել ավելի խրատական հեքիաթներով կամ այլ ստեղծագործություններով, թեմատիկ աշխատանքներն էլ շատ-շատ են, ընթերցանության նյութերը վերանայել:
- 5-րդ դասարանում սկսել և մինչև 8-րդ դասարան շարունակել ամրապնդել ուղղագրության ուսուցումը:
- Միջին դպրոցում (7-9)՝
 - 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում հայոց լեզվի մեկական ժամ ավելացնել,
 - 7-րդ դասարանում գրականության 2 ժամի փոխարեն 3 ժամ ունենալ,
 - Հայոց լեզու և գրականություն առարկաներին հատկացնել շաբաթական 6 դասաժամ,
 - Գրականության բովանդակության հարցում ուսուցչին չպարտադրել ընթերցանության ծրագիր:
- 10-11-րդ դասարաններում շաբաթական 4-ական դասաժամ տրամադրել, իսկ 12-րդ դասարանում՝ 5-ական դասաժամ:
- 6-րդ դասարանում անցնել միայն բառագիտություն, 7-րդ դասարանում և 8-րդի 1-ին կիսամյակում՝ ծավալուն ձևաբանություն, 8-րդի միայն մի կիսամյակում (մոտավոր)՝ շարահյուսություն՝ «Պարզ նախադասություն»: Անհրաժեշտ ժամաքանակ տրամադրել «Ոճաբանություն» բաժնին: 9-րդ դասարանի հայոց լեզվի թեմաները վերանայել:
- 7-9-րդ դասարանների գրականության դասագրքերում ավելացնել արտասահմանյան գրողների ստեղծագործություններ, գրականություն ուսումնասիրել ոչ թե ըստ ժամանակագրության, այլ թեմաների: Դա հնարավորություն կտա անդրադառնալ նաև ժամանակակից և համաշխարհային գրականությանը:
- Վերադարձնել խորհրդային դպրոցի հայոց լեզվի և գրականության դասագրքերը և թեմատիկ պլանավորումն ու ժամաքանակը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Հասարակություն և հասարակական գիտություններ. հարցեր

- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել «հայ եկեղեցու պատմություն» առարկայի չափորոշչում:
- Ի՞նչ դեր է հատկացվելու աշխարհագրություն առարկային ուսումնասիրվող առարկաների ցանկում:
- Աշխարհագրություն առարկան 10-12-րդ դասարաններում ինտեգրվո՞ւմ է բնագիտական մյուս առարկաների հետ:
- Հասարակագիտություն առարկայի մեջ շատ թեմաներ ընդհանրություններ ունեն ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության դասընթացի թեմաների հետ: Հնարավո՞ր է այս առարկաների թեմաները միավորել:

Հասարակություն և հասարակական գիտություններ. առաջարկներ

- Հայոց պատմության ուսուցումը սկսել 5-րդ դասարանից կամ ժամաքանակը ավելացնել 6-րդ դասարանում դարձնելով 2 ժամ:
- Հայոց պատմության ժամաքանակը 6-9-րդ դասարաններում դարձնել 2 ժամ:
- Ավագ դպրոցում համաաշխարհային պատմության դասաժամերն ավելացնել առնվազն 1 ժամով:
- ՀԵՊ առարկայի դասավանդման տարիները նվազեցնել և երեք տարվա ծրագրով ծանոթացնել ազգային-եկեղեցական տոներին, ծեսերին, հոգևոր-բարեպաշտական սովորություններին:
- ՀԵՊ առարկան չհանել:
- Փոխել մոտեցումը հայոց պատմություն առարկայի նկատմամբ. այսօրվա չափորոշիչները պահանջում են ձևավորել կոմպետենտություններ, իսկ քննական համակարգը՝ անգիր արված թվեր և իրադարձություններ:
- Հայրենագիտությանը հատկացվող տոկոսային ժամաքանակը դարձնել տարրականում 8%, միջինում 8%, ավագում 5%: Տարբերություններով լրացնել միջին դպրոցի հայոց պատմության դասաժամերը:
- Հասարակական գիտություններին հատկացված տոկոսային ժամաքանակը դարձնել տարրականում 5%, միջինում 8-12%, ավագում 6-12%:
- Ինտեգրված ուսուցանել հայ ժողովրդի պատմություն, մշակույթ, կրոն, աշխարհագրություն 4-5-րդ դասարանում, իսկ հայոց պատմությունը՝ 6-րդ դասարանից:
- 6-7-րդ դասարաններում աշխարհագրության դասաժամերը դարձնել 2 ժամ:
- Վերականգնել 5-րդ դասարանի աշխարհագրությունը:


ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐ

Այլ առարկաներ. հարցեր և առաջարկներ

- **ՆՁՊ՝** Ի՞նչ փոփոխություններ են նախատեսվում ՆՁՊ առարկայի հետ կապված: Առաջարկ՝ Առարկան չհանել՝ պահպանելով նախկին ժամաքանակը, կամ ՆՁՊ և ԱԿ առարկաներն իրար հետ դարձնել շաբաթական երկու ժամ:
- **Շախմատ՝** Շախմատ առարկան կշարունակվի՝ ուսուցանվել դպրոցներում: Առաջարկ՝ աշխատանքային տետրերի խնդիրների բեռնաթափում իրականացնել և մտցնել խնդիրների պարզեցում: Այլընտրանքային առաջարկ՝ դարձնել խմբակ:
- **Ֆիզկուլտուրա՝** Ֆիզկուլտուրա առարկայի փոփոխություններ լինելու են: Առաջարկ՝ տրամադրել ամեն օր մեկ դասաժամ: Ֆուտբոլ բաժինը (32) ժամ հանել ծրագրից, փոխարենը մտցնել շարժախաղեր բաժինը, որը աշակերտների համար ավելի կարևոր է և նպաստավոր ֆիզիոլոգիական կառուցվածքի ճիշտ զարգացման համար:
- Ինչպիսի՞ կարգավիճակ են ունենալու **տեխնոլոգիա, կերպարվեստ և երաժշտություն** առարկաները: Գնահատվել են արդյոք այս առարկաների արդյունավետությունը: Առաջարկ՝ Երաժշտություն առարկային 1-4-րդ դասարաններում շաբաթական 2 դասաժամ տալ, «Ազգային երգ ու պար» առարկան դարձնել խմբակ:
- Նախատեսվում է բեռնաթափել **տարրական դպրոցի ծրագիրը**:
- Ինչպե՞ս է կարգավորվելու **ֆինանսական կրթության ներդրումը** դպրոցներում:
- Դպրոցում ե՞րբ կունենանք խաղը որպես ուսումնական առարկա, մասնավորապես ազգային, բակային խաղերը:
- Իրավիճակներին արձագանքելու համար անհրաժեշտ է իրավիճակային մանկավարժական մոտեցումներ ներդնել դպրոցում. օրինակ՝ մտագործունեական խաղեր:
- Ժամաքանակ ավելացնել կամ առանձին սեմինարներ իրականացնել հայագետ պատմաբանների հետ:
- Աշակերտների մոտ ձեռնարկատիրական գործունեության ու սոցիալական ձեռներեցության մոտիվացիա առաջացնելու միջոցներ ներդնել ծրագրում:
- **Նոր առարկաների առաջարկներ՝** տարրական դպրոցում՝ «էթիկայի, բարեկրթության նորմեր», «աստղագիտություն»-ը՝ որպես առանձին առարկա, ավագ դպրոցում՝ «թարգմանություն», «հոգեբանություն», իթվինինգ ծրագիրը՝ որպես առարկա, ձեռնարկատիրություն:
- **«Կյանքի հմտություններ»** առարկան ներառել հիմնական առարկաների ցանկում:
- **«Հասարակագիտություն»** առարկան պահել, սակայն առանձնացնել նրա կազմի մեջ մտնող բաժինները, ըստ այդ դասավանդել «կիրառական տնտեսագիտություն» և «իրավունք» առարկաները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

- Ի՞նչ են իրենցից ներկայացնելու աշակերտների կողմից իրականացվող ուսումնական նախագծերը, ի՞նչ կառուցվածք և բովանդակություն պետք է ունենան:
- Նախագծերի թեմաները կլինե՞ն առարկայական չափորոշիչներում: Ո՞վ է թեմաները ընտրելու:
- Ինչպիսի՞ն պետք է լինեն հետազոտական աշխատանքների պահանջները և գնահատման չափանիշները: Կլինե՞ն ուղեցույցներ:
- Ինչպե՞ս է նախագծային աշխատանքն ազդելու տարեկան ամփոփիչ գնահատականի վրա:
- Անհատական (ընտրովի) բաղադրիչով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանվում են տվյալ դասարանի հետազոտական աշխատանքներին, խմբակներին հատկացված նվազագույն ժամաքանակները.
 - Ի՞նչ ասել է անհատական բաղադրիչ, ենթադրվո՞ւմ է արդյոք բացի խմբակներից նախատեսված ժամաքանակը (տարրական դպրոց՝ 350 ժամ) հատկացնել նաև դասարանային հետազոտական, նախագծային աշխատանքներին:
 - Նախատեսվո՞ւմ է ուսուցչին տալ ազատություն սեփական նախաձեռնությամբ օգտագործելու այդ ժամաքանակը:
 - Դասամատյանում գրանցվելո՞ւ է տրված ժամաքանակին համապատասխան կատարված աշխատանքը:



ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հարցեր

- Տարրական դպրոցում թվանշանային գնահատումը հանելը ե՞րբ է ուժի մեջ մտնելու: Ազդելո՞ւ է նաև արդեն 2-4-րդ դասարաններում գտնվող աշակերտների վրա: Փոփոխությունները ե՞րբ են ներդրվելու և ի՞նչ փուլերով:
- Ինչպե՞ս են ստուգվելու շրջանավարտների կարողունակությունները՝ այնպես, ինչպես ակադեմիական գիտելիքները, այսինքն՝ թեստերով, թե՞ ստուգման այլ մեխանիզմներ կգործեն:
- Հիմնական դպրոցն ավարտելուց հետո վարժարան կամ ավագ դպրոց ընդունվելու համար աշակերտները արդյո՞ք քննություն կամ գիտելիքի ստուգում են հանձնելու և ինչպե՞ս՝ հեռավար, թե առերես:
- Միավորային գնահատման բացակայության դեպքում ինչպե՞ս հասկանալ, որ երեխան է հանձնում վերաքննություն կամ մնում նույն դասարանում: Ինչպե՞ս են տեղափոխվելու հաջորդ դասարան: Ինչպե՞ս են հանձնվելու գովասանագրեր:
- Հնարավո՞ր է տարրական դասարաններում իրականացնել միավորային գնահատում, սակայն կիսամյակային և տարեկան ամփոփում չկատարել:
- Շարունակելո՞ւ են լինել գրավոր, թեմատիկ և կիսամյակային աշխատանքներ: Դրանք գնահատման լավ միջոց չեն:
- Առաջին դասարանում աշակերտի բնութագրումն ըստ իր ձեռքբերումների շարադրանքի ձևով բավականին երկար գործընթաց է: Հնարավո՞ր է դա կարգավորել բնութագրիչ կետեր ունենալով և աշակերտի ձեռքբերման մակարդակը նշելով:
- Ձևավորող բնութագրական գնահատումը համարվելո՞ւ է ուսուցչի ամենօրյա աշխատանքի մաս, թե՞ ինչպես իրականացվում է հիմա առաջին դասարանում՝ տարեվերջին լրացվում են հարցաթերթիկները, ինչը ձևական բնույթ է կրում:
- Ունե՞ք արդյոք մշակված մեթոդներ վերահսկելու երեխաների առողջական և ֆիզիկական զարգացման փուլերը:
- Ինչպե՞ս պետք է ձևավորվի 5-րդ դասարանի տարեկան գնահատականը, եթե կիսամյակները գնահատվում են տարբեր սկզբունքներով՝ բնութագրական և միավորային:

Առաջարկներ

- Քանակական գնահատում չկիրառել նաև երաժշտություն, կերպարվեստ, ֆիզկուլտուրա և ազգային երգ ու պար առարկաներից միջին դպրոցում:
- Թվանշանային գնահատում չկիրառել նաև միջին դպրոցում:
- Ձևավորող գնահատում իրականացնել միայն 1-ին և 2-րդ դասարաններում:
- Ներդնել 360* գնահատում՝ աշակերտից մինչև տնօրեն:
- Թեմատիկ գրավոր աշխատանքներն անցկացնել համակարգիչներով:
- Երեխայի ինքնագնահատման հնարավորությունները հաշվի առնել:

ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Հարցեր

- Արդյո՞ք փոփոխվելու են ուսուցիչների դրույքաչափերը:
- Դասվարները ամբողջական դրույքաչափ չեն կարող ունենալ: Ըստ այդմ, արդյո՞ք վերանայվելու են նրանց դրույքաչափերը: Կարող է այն նաև դառնալ հաստիքային աշխատանք:
- Ֆինանսական աջակցություն կստանա՞ այն ուսուցիչը, որ որոշակի ծախսեր է կատարել իր դասը հետաքրքիր անցկացնելու համար կամ կազմակերպել է առարկայի շրջանակում էքսկուրսիաներ:
- Ի՞նչ ծրագրեր կան այն ուսուցիչների համար, ում աշխատավայրը փակվելու է, կամ դասաժամերը պակասեցվում/հանվում են:
- Փոքր դպրոցներում ուսուցիչը քիչ երեխաներով դասարաններում պարապելով նույն ժամաքանակը և նույն դասաժամերը վարձատրվում է 0.5 և 0.25 դասաժամի համար: Օրինակ՝ պարապելով 22 ժամ, վճարվում է 11 ժամի կամ 6.5 ժամի համար: Կա՞ նախատեսված որևէ լուծում այս խնդրին:
- Ի՞նչ աշխատանքներ են տարվում առարկայական օլիմպիադաների բարելավման ուղղությամբ: Դպրոցում վճարովի խմբակների մեջ կարո՞ղ են ընդգրկվել օլիմպիադայի մասնակից աշակերտների խմբակները: Ինչո՞ւ օլիմպիական աշակերտների ուսուցիչները չեն խրախուսվում:
- Ինչո՞ւ ուսման վարձերի եկամտահարկով փոխհատուցելու օրենքի մեջ ներառեցիք միայն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողներին: Կան ուսուցիչներ, ովքեր այս պահին և՛ աշխատում են, և՛ հեռակա սովորում:
- Գյուղական դպրոցներում թերբեռնված դասարանների ֆինանսավորումը վերանայվելո՞ւ է:
- Վերանայվելո՞ւ է ուսուցիչների վարձատրությունը, որ կախված չլինի աշակերտների թվաքանակից:
- Ինչո՞ւ է նույն դասաժամեր ունեցող ուսուցիչը մի դպրոցում ուրիշ չափի աշխատավարձ ստանում, մյուս դպրոցի ուսուցիչը՝ ուրիշ:

Առաջարկներ

- Դրույքաչափերը դարձնել 18 կամ 16 ժամ:
- Սահմանապահ գյուղերի ուսուցիչների աշխատավարձի էական փոփոխություն կատարել:
- Վճարել քմիայի ուսուցիչներին կամ լաբորանտներին՝ արված փորձերի համար, վճարել դասղեկներին և մեթոդ միավորման նախագահներին:

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ԵՒ ԲՈՒՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հարցեր

- 12-րդ դասարանում ավարտողների քննական շտեմարաններում բեռնաթափում նախատեսվում է:
- Նախկինում թե՛ ավարտական, թե՛ միասնական քննությունները աշակերտները մեծ մասամբ տալիս էին թեստերի միջոցով: Փոխվելով է արդյոք ստուգման ձևը:
- Ե՞րբ է նախատեսվում միասնական քննությունների հարցաշարերի փոփոխություններ:
- Ի՞նչ մեխանիզմներ կան ավագ դպրոցի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին մոտիվացնելու մանկավարժական ԲՈՒՅ ընդունվելու համար:
- Հնարավոր է ավագ դպրոցում թույլ սովորողները իրենց կողմից չընկալված առարկաների փոխարեն սովորեն վարսավիրություն, կավագործություն կամ որևէ արհեստ:
- Կրեդիտային համակարգ ավագ դպրոցում ներդրվելու է, թե՞ ոչ:
- Ի՞նչ ծրագրեր են նախատեսված հայրենադարձ երեխաների համար՝ ավագ դպրոցի կրթության ոլորտում:
- Կարո՞ղ է արդյոք բնագիտամաթեմատիկական հոսքի աշակերտը ընտրել հումանիտար հոսքի դասագիրք և սովորել դրանով:

Առաջարկներ

- ԲՈՒՅ-ի ընդունելության պահանջներում քննությունից բացի դնել նաև ավագ դպրոցում ուսումնառության տարիներին արտադասարանական միջոցառումների, հասարակական աշխատանքների մասնակցություն ունենալու և դրանցում արդյունավետ ձեռքբերումների առկայության փաստը:
- Վերանայել 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի դասացուցակը, քանի որ այս պահի դրությամբ անիմաստ ժամանակի կորուստ է:
- Ավագ դպրոցում աշակերտներին ազատ եւ ինքնուրույն ուսումնառության հնարավորություններ ստեղծել, մասնավորապես, պարտադիր առարկաներ, նվազագույն քանակով ընտրովի առարկաներ և ցանկության դեպքում նաև այլ առարկաներ ուսումնասիրելու հնարավորություն ապահովել:

Հարցեր

- Արդյո՞ք փոփոխվելու է դասարաններում աշակերտների քանակը: **Առաջարկ՝** 30-35-ի փոխարեն դասարանում ունենալ 20-25 աշակերտ: Նշում՝ այս առաջարկի շուրջ կար համատարած համաձայնություն:
- Դպրոցի մուտքի տարիքը կփոխվի՞: **Առաջարկ՝** դարձնել այն 7 տարեկանից: Նշում՝ այս առաջարկի շուրջ կար բավականին լայն համաձայնություն:
- Արդյո՞ք կփոխվի մեկ դասաժամի տևողությունը: Առաջարկներ՝
 - 40 րոպե բոլոր համար,
 - 35 րոպե տարրական դպրոցում օրական 4 դասաժամով:
- Ի՞նչ փոփոխություններ կլինեն 12-ամյա կրթության հետ կապված:
- Ի՞նչ փոփոխություններ են լինելու երկհամակազմ կամ բազմահամակազմ դասարանների հետ կապված:
- Արդյո՞ք որևէ փոփոխություններ են սպասվում ազգային փոքրամասնություն կազմող դպրոցներում: Չե՞ք կարծում, որ պետք է տարանջատում մտցնել ծրագրերի մեջ:
- Ինչպե՞ս է կարգավորվում դասարանը կիսել-չկիսելը: Արդյո՞ք արդար է, որ որոշ առարկաների համար դասարանները կիսվում են, իսկ որոշների համար՝ ոչ:
- Երևանում կամ այլ քաղաքներում ծնողն է ընտրում դպրոցը, իսկ գյուղերում այն միակն է: Ծնողն իրավունք ունի՞ ընտրելու ուսուցչին:
- Փոխվելո՞ւ է արդյոք գրադարանների աշխատանքի նկատմամբ մոտեցումը. գրադարանավարը համարվելո՞ւ է արդյոք մանկավարժական աշխատող, լինելո՞ւ են դպրոցական գրադարանների համար և գրադարանավարական հմտությունների համար նոր մոտեցումներ:
- Ի՞նչ ասել է «ցանցային դպրոց», ինչպե՞ս են դրանցում կազմակերպվելու գործընթացները թե՛ հաստատության կառավարման, թե՛ ուսուցիչների և սովորողների ներգրավվածության առումներով՝ ներառյալ նաև այդ դպրոցների կազմավորման աշխարհագրությունը:
- Որքանո՞վ է նպատակահարմար գտնում ավագ դպրոցի մերձակայքում միջնակարգ դպրոցի առկայությունը:
- Ինչպե՞ս են վերահսկվելու տոկոսային դասաբաշխման, ինչպես նաև դասաժամերի տնօրինման հարցում դպրոցների ազատության մեծացման արդյունքում առաջացած կոռուպցիոն ռիսկերը:
- Արդյո՞ք կաբինետային ուսուցման համակարգն ավելի ճիշտ չէ. այդ դեպքում ուսուցիչը (օրինակ՝ պատմության) դասի հաշվին քարտեզները, նկարները, դիտակտիկ նյութերը չի տեղափոխի, այլ դասը կանցկացվի արդեն կահավորված, հագեցված դասարանում:

Հարցեր

- Նախատեսվում է արդյոք դպրոց-ծնող-երեխա կապի առավել ամրապնդման, խնդիրների համատեղ և արդյունավետ լուծման պարտադիր գործառնություններում, ինչպիսին է, օրինակ, ծնողավարման դասընթացը կամ փոխօգնող խմբի ձևավորումը:
- Ինչպե՞ս է հնարավոր անցկացնել երկարօրյա պարապմունքներն այնպես, որ ուսուցիչը հասցնի: Երկարօրյայի դասավանդումը ինչպե՞ս է լինելու: Ո՞վ է դասավանդելու:
- Ի՞նչ ծրագրեր են նախատեսված գյուղական համայնքների դպրոցները համակարգչային լիարժեք դասասեսնյակներով և էլեկտրոնային գրադարաններով համալրելու ուղղությամբ:
- Ուսումնական պլաններն ազատականացվելո՞ւ են:
- Նախատեսվո՞ւմ են անհատական ուսումնական պլանների օրինակելի ձևի, լրացման կամ այլ փոփոխություններ:
- Օրվա պլան գրելն ի՞նչ ձևաչափով պիտի արվի:
- Բարեփոխումները կակնկալե՞ն դասապրոցեսի այլնտրանքային մոտեցում:
- Ինչպիսի՞ն պետք է լինեն կոմպենտեցիաների ձևավորմանն ուղղված ուսուցման կազմակերպման մեթոդները :
- Մասնավոր դպրոցները ներառվելո՞ւ են այս գործընթացում, լինելո՞ւ է հավասար վերահսկողություն այնպես, ինչպես պետական հանրակրթական դպրոցներում է առկա:
- Բացակայությունների ժամաքանակի հետ կախված որևէ բան փոփոխվելո՞ւ է:
- Նոր չափորոշիչներին համապատասխան ե՞րբ են լինելու ուսուցիչների վերապատրաստումները:
- Լրացուցիչ կրթությունը՝ սպորտը, արվեստը եւ այլն, հիմնականում լրացուցիչ վճար է ենթադրում: Եթե դա արվի դպրոցի պատվերով, ծնո՞ղը պիտի դրա համար վճարի:
- Ի՞նչ չափով են կիրառվելու փոփոխությունները ՄԿՈՒ համակարգում:
- Միջին մասնագիտական հաստատություններում չափորոշչային փոփոխություններ նախատեսվո՞ւմ են, թե ոչ:

Առաջարկներ

- Որպես մանկավարժ և ծնող առաջարկում եմ Շիրակացի ճեմարանի մոդելը տարածել հանրակրթական դպրոցներում:
- Ավելացնել առարկայական խմբակների ժամերը՝ հնարավորություն տալով չառաջադիմող աշակերտներին լրացուցիչ պարապմունքների միջոցով շտկել ուսումնական բացթողումները:
- Վերանայել ազգությամբ հայ երեխաներին ռուսերենով ուսուցմամբ 1-ին դասարան ընդունելության և ռուսերենով ուսուցմամբ դասարաններում հայոց լեզվի և գրականության ուսուցման խնդիրները (այդ դասարաններում սովորողների 90%-ը հայ երեխաներ են, ովքեր, ներգաղթով պայմանավորված, պետական լեզուն սովորել են սկսում 7-9-րդ դասարաններում):
- Մեծացնել աշակերտական և ծնողական խորհուրդների լիազորությունների շրջանակը:
- Հանել հանդեսները:
- Թույլ տալ ուսուցչին աշխատել իր ընտրած դասագրքերով:
- Հանրակրթության պետական չափորոշչի նախագիծը դպրոց մտցնել աստիճանաբար՝ խմբագրել կետերը և յուրաքանչյուր ուս. տարի ներմուծել մի խումբ կետեր:
- Ծրագրերում ներառել համակցված դասաժամեր միջառարկայական կապերի վեր հանման համար:

Սույց ղեկույցում տեղ է գտել 95 հարց և 77 առաջարկ, որոնք ներկայացնում են ստացված մոտ 2000 հարցերի և առաջարկների ամփոփումները:

Ձեկույցում ներկայացված հարցերն ու առաջարկները կարող են չհամընկնել «Պարադիգմա» կրթական հիմնադրամի դիրքորոշումների և մոտեցումների հետ:



 **ՊԱՐԱԴԻԳՄԱ**
Կրթական հիմնադրամ